

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շաբ. տես Բազմ. 1924, էջ 285)

ԶԳ՝

Մեր հրատարակած վաւերագրերու շարքին մէջ ընթերցողը ուռուզիւ եզական նորութեան մը հանգիւպած էին: Մոռացութեան մատնուած պատուարեր դէմը մ'էր ան, որ իբրեւ ծաղիկ մը ծլած հայրենի յարկին մէջ՝ փոխադրուած էր օտար երկնքի տակ, օտար ընկերութեան մը ծոցը, ուր իր սրբութեան գեղով զմայլեցուցած էր ոչ միայն զինքը շրջապատող ընկերութիւնը՝ այլ նոյն իսկ զինքն հիւրընկալող միջա- վայրը:

Կ'ականարկենք այն հայ « Էգիգ » կուսանը՝ որուն գոյութեան նորագիւտ պատ- մութիւնը տուին մեզ մեր կէն և ԿԶ վաւերաթուղթերը: Անոնց մէջ կը պակսէր սա- կայն էական ծանօթութիւն մը՝ ինչ ինչ կարեւոր պարագաներու շուրջ:

Աւրախ ենք այժմ, որ հետեւեալ թուղթը այդ մասին նոր լոյս մը պիտի սփռէ և այդպէս լիով գոհացում պիտի պատճառէ:

Գեորգիայի Տիւսն Տիւսն Միւխրատի Արքայ հօրդ մերոյ
Գերագանցի Վարդապետիկ Աստուածաբանուորեան

... Կոյս ոմն գաղատացի ի ձեռն ֆրանցուգ Էլէիին ի վարուց ժամանակաց յղեցեալ էր ի Ֆոանցայ կուսանաց վանքն. սոյն կոյս ստացեալ է զգերագանց վարս առաքի- նութեան այնքան մինչ զի զարմացեալք սքանչելի վարուց նորա կուսանքն այնմ վանքի գրեալք են զպատմութիւն վարուց նորա առ հրեշտակն ֆրանցուգի. և նա կոչեալ զսե- րաստացի մինաս վարդապետն տուեալ է զպատմութիւն վարուց այնմիկ կուսին, և ասացեալ է նմա յղել առ գերագանցութիւն ձեր. և մինաս վ.ն եւս գրեալ զողջունագիր մի առ ձեզ և ընդ այնմ գրոյ յղեալ է և զպատմութիւնն այնմիկ կուսին ի միւս անցելում՝ զատկի, և մինչև ցայժմ ոչ է ընկալեալ զպատասխանի գրոյն. արդ վասն այսորիկ աղաչեաց զիս մինաս վ.ն վերոյգրեալ, և ասաց թէ գրեալ զողջոյն յարգութեան ի դիմաց իմոց առ գերարքութիւն Աբբայ հօրն, և հարց թէ արեւօք այսպիսի գիր ենաս առ ձեզ թէ ոչ. եթէ ոչ, գրեցէ ինձ՝ զի կրկին գրեցիք զպատմութիւն կուսին և զողջագիր առ Տէրութիւն իւր. և զպատասխանի գրոյս շուտով յղեցէ ինձ, որպէս զի մի՛ յամօթ եղէց մերձ հրեշտակին վերոյգրեցելոյ երբ կրկին հարցանէ զիս.... Աստ եղեալ միսիօնարքն ոչ ունին զհամաձայնութիւն ընդ մեզ ի տօնելն զտօնս հանդիսաւորս, և ասին թէ սուրբ ժողովն միայն զհինկ տօնս պատուիրեալ է անել հին տօմարով և ոչ զայլսն յայտմ ամի յոյժ սաստիկ ժանտամահ, մինչև ցհինկ ամիս տեւաց....

Յամի Տեառն 1738

Նոյնմբերի 24

[Կ. Պոլիս]

Նուաւտ ծառայ Տ. 2.

Հայր Բժմաս վարդապետ Թէոդոսեան

ՁԴ.

Կարողու Ջ. ի Թագաւորութեան գրեթէ մայրամուտի (1711 † 1740) պահերուն
կը կատարուին Հ. Թ. Յովհաննիսեանի յիշատակած պատմական դէպքերը:

Նամակագիրս կը հետաքրքրէ նաև Կերլայի Հայութեան կրած ձախողութեանց
շուրջ՝ տուած որոշ բացատրութեամբ ու ծանօթութիւններով:

Գերապայծառի և Գերայագեղեյոյ Տեառն Մխիթարայ Արքայի, Աստուածարևոտքեան
Վարդապետի, և Հօրոյ մերում մեծաւ խոնարհութեամբ, և բազմաւ կարօտի մատուցանել
գորդիակամ աղոյցն, և զգնատակութիւն:

... յանկարծակի ենաս լուր թէ տաճիկք ելեալ ի Օրշոփայէն՝ սպառնան մտանել
ի դրանսիլվանիայ, և առաթուր առնել զամենայն բնակիչս: Յայնժամ յերկիւղէ, և ի
կարծեաց եկելոց՝ սկսան՝ զինչ իւրեանց կեողացիք մինն ի Դուռ, միւսն ի Պիտտրիցայ,
և այլք յայլ ուրիշ, իբր փախտականք: Եւ այսու պատճառաւ մոռացան գրել առ Գեր.,
յարգելութիւնդ... վերջապէս լուաք թէ յետս ընկրկեալ են կայսերական զօրքն զմահ,
մոտականս: Բայց յետ ոչ բազմաց աւուրց մերձեցաւ ժանտաման Կերլայի քաղաքին, և
սկսան շուրջանակի մեռանել կարի սաստկաբար, մինչև վերջապէս ենաս ի Կեռլայ, և
մեռան ի միում տան երկու տղայք մինն զկնի միւսոյն, և ոչ ոք մերձեցաւ առ նոսա,
այլ թաղեցին ծնողքն զնոսա ի բակս իւրեանց, և դատաւորքն փակեցին զտունն զայն
զամիս մի, որպէս զի փորձիցեն ամրոցք ի ժանտամանէ իցեն մեռեալք թէ յայլմէ
պատճառէ, և ետ որպէս զի մի լնանիցին այլք, եթէ բուցէ ի ժանտացաւ իցեն տղայքն
մեռեալք: Եւ քանզի ասացին ծնողաց տղայոց դատաւորքն ոչ թաղել զնոսա ի տուրնջեան
այլ ի գիշերի, որպէս զի այլազգիքն մի իմանայցեն, և համբաւ չար զքաղաքէն հանիցնու:
Բայց քանզի ոչինչ է ի ծածուկ (ըստ Տեառն բանի) որ ոչ յայտնիցի, ուստի գիւղականք
տեսանելով զնոսա լուսով հրագի փորել զփոս ի պարտիգի՝ զնացին, արշաւեցին, թռան
և հասին առ շրջակայ այլազգի իշխանսն, և համբաւեցին, թէ այնքան սաստկաբար
մեռանին հաթ՝ մինչ զի ի տուրնջեան ոչ կարեն ունիլ զժամանակ զամենայն մեռելան
թաղելոյ, վասն այսորիկ նաև ի գիշերի թաղեն: Եւ այսպէս ել վատ համբաւ զքաղաքէն,
թէ արաթուր տապաստ անկեալ մեռանին: Վասն որոյ եկեալ փակեցին զքաղաքն շուր-
ջանակի, և ասացին հայոց չէլանել ի քաղաքէն, զի ուր և գտանիցեն զնոսա հրացանով
սպանցեն: Եւ այսպէս աւելի քան զվեց շաբաթ ոչ ոք ել անտի, և ոչ ոք մտանէր անդ:
Մինչև վերջապէս իմացան զճմարիտն, թէ ոչ ի ժանտացաւէ, այլ ի Երազիկէ մեռեալք
են տղայքն: Եւ ետ յայսմ ժամանակի բնակէի ի տան քեռ իմոյ, և յեկեղեցոյ լսէի
զխոստովանութիւն, ըստ խնդրոյ Տէր Մինասին աւագերէցին, մինչև փակեցաւ քաղաքն:
... վաճառականքն առուկապ հղեալ են, և ոչ կարեն գնալ ուրեք...:

Նուաստագունեղ ծառայ

Յամի Տեառն 1739

Հ. Թ. Յովհաննիսեան Կ. ի Կ. Անդօնեան

Յունվարի 3 ի Կեռլայ

ՁԵ.

Կը շարունակէ Հ. Միքայէլ իւր օրագրական լուրերը ժամանակակից պատե-
րագմին և անոր ընթացքին շուրջ հետեւեալ թուղթերուն մէջ:

1. Հոս բնագրին մէջ բայ մը կը պակսի. պէտք է յաւելուլ փոխադրել կամ տանել և այլն:

Գերյարգեցեկոյ Սարգս Հօրոյ մերոյ, տեւան տեւան Միւրաբարայ
Աստուածաբանութեան Վարդապետի

... Յաւուրս յայստիկ լուաք, թէ ի յետէլու նահանգն մերձ սիպինու, ժամանեալ են քանի մի Ռ տանկիք, այն կողմն եղեալ գումանտանթէն փոխնչիքէ լօգովիցն, լուեալ, ի մէջ առեալ են զտանկիսն, 1500 չափ տապաստ արկեալ են, և զայլս փախտապան արարեալ: Նաև բազում գիւղօրէք ուլահաց ապստամբեալ ի կայսերէն, ի կողմն տանկի են, իւրեանց մի մեծ եպիսկոպոս մէթրոփօլիտ գնացեալ յորդորեալ է զի հնազանդիցին կայսերն, ասացեալ են նոքա. Որպէս այս ձեռով եկիր գնայ բարով, քեզ չնորհե՛ք: Եթէ այլ անգամ գաս այսու ձեռով, զքեզ կախենք մինչ ի 7 տարուանիս հասնի, երբեմն ևս լուաք թէ զմի եպիսկոպոս իւրեանց մատնեալ են ի ձեռս տանկաց: Վասն այսօրիկ ի կողմանէ կայսերն ելեալ է հրաման զի ի 7 ամաց ի վեր կոտորեսցեն զամենայն ապլւս տամբ ուլահան. այս գործս առնողքն, եօթն ութ Ռ զօրք և զատանայք են, որք չըշին և անեն,...

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վրդ. Սեբաստացի

1739 Յունվարի 31
ի Պէլլրդաս

22.

Գերյարգեցեկոյ Սարգս Հօրոյ մերոյ, տեւան տեւան Միւրաբարայ
Աստուածաբանութեան Վարդապետի

... զսպասաւորս ուղարկեցի մերձ ի ժամ ճաշուն, գնացեալ եկն, թէ ոչ զոյ գիր. նաև երբ զչար լուր ինչ, թէ այս կէս գիշերուն յետ, լուեալ են թէ թուրք քան աւարել, գերել և հրձիգ զվարուչն, ութ հարիւրի չափ են եղեալ նոքա, այստի երկու հազարի չափ հեծելալ և հետեակ գիշերով գնացեալ ի դուրս, զի դարման կայցեն և ի մէջ առցեն զտանկիսն. սոքա իմացեալ փախեալ են, և զօրք սոցին ի զէմ լոյս վերստին ի ներքս եկեալ են. և յայլմէ լուաք թէ ոչ ինչ զոյրք, և սուտ էր, աստ ամենեքեան յերկիւղի են, զօրք սակաւք են, չորս հազար հազիւ, սոցա բանն և նշմարանք ափշելի է. բազում և զանազան զրոյցք կասկածանք գոն, թէ սուտ և թէ ճշմարիտք իցեն:... Աստ զոյ մի ալպանիացի լաթին եպիսկոպոս իստէֆէու նահանգին, տանկի ուայէ, սա զինն առեալ տարին, փախեալ ընդ բազմաց ժողովրդոց իւրոց եկեալ է աստ, միքայէլ անուամբ, այր տոտապեալ և ցաւազնեալ սրտի վասն արարմանց սոցին այսպէս դիպեցելոց: Բնակի ի վանս Ֆոտանչիսկանաց, լաւ գիտէ զլեզու տանկի, զտալիան և զլաթին և զայլս լեզու: Երիտասարդ հասակի, վեց ամիս է, սա է խոստովանահայրն իմ:... Հերու ի մեծ պաւ հուցն ճուպիւն և թափուրք վասն պատերազմի եղեն, այս ամ ոչինչ: Չշարժէ որ յառաջ գրեցի, յետ նորա այլ մի անգամ ևս հանդիպեցաւ, և այլ ոչ տեսաք. այժմ արտաքին շարժն տանկին երևի, ի սէմէնոր եկեալ ասեն տանկիք: Այն տօղրամանին որ գնաց ընտանեօքն ի նիշ ընդ որոյ և այլք բազումք էին, զիս և զայլս զոմանս կախեալ, զոմանս ի ցիցն հարեալ զոմանս սպանեալ, փաշան տեղւոյն, և զգաւակսն, զկանայսն, մերթ լուաք թէ թուրքացուցեալ են, և մերթ թէ գերի արարեալք են:...

Գերյարգութեան քում

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1739 մարտի 7, յոր տօնի
սրբոյն թօմայի ազուինացոյ
ի շաբաթու քառասուն մանկանց
ի Պէլլրդաս

ՁԷ.

Գերյարգեցելիյ Սխրայ հօրդ մերոյ տեսան տեսան Մխիթարայ
Առտուածարանութեան վարդապետի

... չունին իմ աստի ևս քան զևս դժուարին և դժուարին է, զի բնաւք ճանապարհք փակեալք են վասն երկիրդի մահուն։ Ի վիճինա ևս ասեն շողորթն տեսանի, և ձայնն լսի։ Ի պոէշպուրկ, որ նաև Բօթուն կոչի, միոյ աւուր ճանապարհ հեռի ի վիճնայու, երեք և չորս հայք, չորս հինգ ամիս որք աստի գնացեալ, որք թէպէտ և յայլ ուր զնազարէթ պահեցին, տակաւին անդ արգելեալ կան, ոչ թողուն գնալ ի վիճնա։ Աս քաղաքս բնակողացս մի լապէրինդոս դարձաւ, որք ոչ ի տանկաստան, և ոչ ի քրիստոնէաստան կարեմք գնալ։ Աստուած այց արասցէ, բայց միայն պատերազմօղջի գան և երթան, մինչև ցարդ նշմարանք զօրաց սոցա ի մօտակայ տեղիս երևեցան, վեց նաւ աստ ի պատրաստի են, վեց ևս երեք շաբաթն որ ի վիճնայու եկեալ են զալ այսր։ Նաև իբրու 40 օր է 350 մառնար և Եփ գազալէր մալթէզ եկին աստ ի դրէստոս օգնութիւն սոցա, զերկու նաւն սոցա ետուն, ասեն թէ յետի եկող նաւերուն մէջ գոն մալթէզք այլ աւելի քան զայս։ Նաև ճէնուէզք, արիկօնէզք, փափականք, և բլիհաւօք։ Լինին ժի նաւք քառասնական և երեսնական թօփ կրօք, նաև զօրաց ընթացք բազումք, լսին, ոչ գիտեմք թէ զինչ առնելոց են, և առ ինչ եզերելոց է իրակութիւնն, տէր մի արասցէ որպէս ի հերու հռչակն մեծ էր, և կատարածն եղև վաթթար։ Նամնապէս և թշնամին ի վերայ մօտաւայ գետոյ ի վարաց զկամուրճս կապեալ պահեն զօրքն, սպասեն զալստեան մեծ զօրուն իւրեանց, և յամենայն աւուր զգալստենէ նոցին աստ, լսեմք. գուցէ լինիցի սուտ։

1739 Յունիսի 13
ի Պէլլղատ

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ վրդ. Սեբաստացի

ՁԸ.

Գերյարգեցելիյ Սխրայ հօրդ մերոյ տեսան տեսան Մխիթարայ
Առտուածարանութեան վարդապետի

... Զօրք սոցա երևի թէ Խի իցեն, և ասեն թէ զալոց են ևս փառֆիլի և փոխն չիփէ նայինպէտքի զօրքն իբրու Խի, հասանելոց են այսոցիկ զարմացման։ Նամնապէս ի կողմն դմշուվարու բոն զօրք, թէ և ոչ այսքանք, որոց զլուին է փոխիչիփէ լօզովիցն, և ասեն թէ մօսկովի զօրք գոն ևս անդ։ Առ զինչ եզերելոց է, ոչ գիտեմք։ Նամնապէս վեց նորաշէն նաւքն ի յունիսի 21 եկին աստ ի վիճնայու, 500 ճէնիվիզ մառնարաւով և նաւապետով. բնաւ նաւքն 13.9 սոցա հանդէպ քանակին ի վերայ թունային նստեալ, և 4 աստ մերձ պարսպաց քաղաքիս որ ի վերայ թունայի, պահապանք կարմնոց, երկու կարմունջ ի վերայ սափայու, և մի ի վերայ թունայու։ . . .

1739 յունիսի 4
ի Պէլլղատ

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Սեբաստացի

Շարունակելի

Հ. ՂԵՆՈՆՏ ՏԱՅԵԱՆ